## Հովանավորման հետ կապված Dispute-ներ և Breakdown-ներ

### Ի՞նչ է հովանավորման հետ կապված dispute-ը

Հովանավորման ընթացքում հովանավորների և նորեկների միջև կարող է տարաձայնություն կամ թյուրիմացություն առաջանալ։ Հովանավորման հետ կապված dispute-ները կարող են զանազան բնույթ կրել՝ հովանավորման պայմանների շուրջ տարաձայնություններից մինչև տարբեր խնդիրների շուրջ տարակարծություններ։ Բարեբախտաբար, հովանավորման հետ կապված վեճերը ոչ միշտ են հանգեցնում հովանավորման breakdown-ի։

Հովանավորման հետ կապված dispute-ը կարելի է լուծել կամ թեթևացնել՝ հետևելով dispute-ներից, breakdown-ներից ու default-ներից խուսափելու մասին այս փաստաթղթի 4-րդ էջում ներկայացված օգտակար խորհուրդների վրա։ Կանադայի Ներգաղթի, փախստականների և քաղաքացիության վարչությունը (IRCC) նաև կարող է օգտակար լինել հովանավորման dispute-ների հարցում IRCC-ի իր տեղական գրասենյակների միջոցով, որոնք պատասխանատու են ժամանումից հետո առաջացող խնդիրների լուծման համար։ IRCC-ի տեղական գրասենյակը կմիջամտի հովանավորման հետ կապված dispute-ին, երբ.

- dispute-ի կողմերից մեկը կամ երկուսն էլ IRCC-ի միջամտություն են խնդրել; կամ
- ներքին կարգավորման միջոցով իրավիճակը չի հաջողվել կարգավորել; կամ
- հովանավորման ընթացքում նորեկը դիմել է սոցիալական ծառայությունների գործակալության, իսկ գործակալությունն էլ իր հերթին դիմել է IRCC-ին՝ գործի մասին հարցումով։

### Ի՞նչ է հովանավորման breakdown-ը

Հովանավորման breakdown-ը պաշտոնական հայտարարություն է այն մասին, որ հովանավորների ու նրանց հովանավորյալ նորեկների միջև հովանավորվածությունների պահպանման «անուղղելի բեկում» է տեղի ունեցել։ Հովանավորման breakdown-ի դեպքում IRCC-ն հրապարակում է Declaration of Sponsorship Breakdown՝ չեղարկելով հովանավորման նախաձեռնությունը։

### Ի՞նչ է հովանավորման default-ը

Երբ պարզվում է, որ breakdown-ի պատասխանատվությունը հովանավոր խմբինն է, և վերջինիս չի փորձել լուծել breakdown-ի հանգեցրած բախումը կամ խնդիրները, ապա հովանավորման default է հայտարարվում։ Հովանավորման default-ը հովանավոր խմբի կողմից պայմանագրային պարտականությունների խախտումն է, կամ Undertaking-ի (Ձև IMM 5373) և/կամ Sponsorship Agreement-ի հետ կապված որևէ ֆինանսական կամ ոչ-ֆինանսական պարտավորության չկատարումը։

**Ինչո՞ւ է հովանավորման breakdown տեղի ունենում**

Հովանավորման breakdown կարող է տեղի ունենալ մի շարք պատճառներով, ներառյալ հետևյալը.

- անլուծելի dispute կա, օրինակ՝ անհատականությունների բախում, անիրատեսական սպասելիքներ, կամ տարաձայնություններ նորեկին տրամադրված աջակցության մակարդակի շուրջ;
- հովանավորման պայմանները չեն կարող կատարվել նորեկի անձնական իրավիճակի փոփոխության պատճառով, օրինակ.
  - ամուսնական առանձնացում կամ ամուսնալուծություն;
  - երկրորդական միգրացիա, կամ, այլ կերպ ասած՝ նորեկները որոշել են տեղափոխվել մեկ այլ տարածաշրջան, և հովանավորները չեն ցանկանում, կամ չեն կարող շարունակել նորեկին օժանդակություն տրամադրել իր նոր համայնքում;
  - հովանավորները չեն կատարում ֆինանսական և/կամ բնակեցման օժանդակություն տրամադրելու՝ իրենց պարտականությունը;
  - հովանավորման մեկամյա ժամանակահատվածում նորեկը որոշում է անցնել սոցիալական օժանդակության, և այդ մասին հովանավորին չի տեղեկացնում:

**Ի՞նչ անել հովանավորման dispute-ի կամ breakdown-ի դեպքում**

Եթե կողմերի միջև dispute-ը չի լուծվում, և հովանավորման բեկման հավանականություն է առաջանում, ապա կա՛մ հովանավորը, կա՛մ նորեկը պետք է դիմեն IRCC հետևյալ խողովակներից որևէ մեկով.

- Էլեկտրոնային փոստով՝ PSR-PPPR@cic.gc.ca, IRCC-ի համապատասխան տեղական գրասենյակի հետ կապվելու համար; կամ
- Զանգահարելով IRCC-ի Հեռախոսային կապի կենտրոն՝ 1-888-242-2100:

1. Dispute-ի մասին ծանուցվելուն պես, IRCC-ի տեղական գրասենյակը կկապվի հովանավոր խմբի և նորեկ ընտանիքի հետ: IRCC-ն կգնահատի իրավիճակի լրջությունն ու կորոշի՝ արդյո՞ք իր միջամտությունն անհրաժեշտ է:

2. Եթե IRCC-ի միջամտությունն անհրաժեշտ է, ապա IRCC-ի աշխատակիցը կփորձի օգնել կողմերին՝ լուծել dispute-ը:

3. IRCC-ի տեղական աշխատակիցը հանդես կգա իբրև «միջնորդ»: Եթե լուծում չգտնվի, ապա IRCC-ն կարող է վերջնական որոշում կայացնել հետագա քայլերի վերաբերյալ:

4. Եթե միջնորդական գործընթացի ընթացքում (որը կարող է շաբաթներ տևել) բնակեցման կամ ֆինանսական օժանդակության անհապաղ անհրաժեշտություն է առաջացել, ապա IRCC-ն կարող է նորեկներին ուղղել սոցիալական օժանդակության տեղական

մարմիններին (եթե հովանավորումը Group of Five-ի կամ Community Sponsor-ի միջոցով է), կամ Վերաբնակեցման օժանդակության ծրագրի (RAP) եկամտային աջակցության (եթե հովանավորը Sponsorship Agreement Holder է):

5. Breakdown հայտարարելու դեպքում IRCC կորոշի՝ որ կողմն է պատասխանատվություն կրում: Հովանավորման breakdown-ի համար պատասխանատվությունը կարող է վերագրվել հովանավորներին, նորեկներին, IRCC-ին, կամ կողմերից ոչ մեկին: Եթե պատասխանատվությունը վերագրվում է հովանավոր խմբին, ապա IRCC-ը կգնահատի՝ արդյո՞ք տվյալ խումբը հովանավորման default-ում է հայտնվել: Այդ գնահատման շրջանակում հաշվի կառնվի նաև՝ արդյո՞ք հովանավորները փորձել են կարգավորել իրավիճակը:

Հակամարտության ողջ ընթացքում հովանավոր խումբը պետք է շարունակի կատարել հովանավորի՝ իր պարտականությունները:

Այն դեպքերում, երբ Constituent Group (CG), կամ Sponsorship Agreement Holder-ի (SAH) համահովանավոր է ներգրավված, կարևոր է dispute-ի մասին ծանուցել SAH-ին, որպեսզի վերջինս կարողանա ներքին կարգով դրան լուծում գտնել, քանի որ հովանավորման վերջնական պատասխանատուն ինքն է: Որոշ դեպքերում SAH-ը կարող է քննարկել հովանավորման պատասխանատվությունը մեկ այլ CG-ի փոխանցելու նպատակահարմարությունը, կամ որոշի շարունակել կրել դրա պատասխանատվությունը: SAH-ը կարող է նաև քննարկել մեկ այլ SAH-ի դիմելու նպատակահարմարությունը՝ խնդրելով, որ հովանավորման մնացած ժամկետի ընթացքում վերջինիս ստանձնի հովանավորման պատասխանատվությունը:

Եթե breakdown է հայտարարվել, ապա հովանավորը, IRCC-ի տեղական գրասենյակի օգնությամբ, կարող է փորձել նորեկների համար փոխարինող հովանավոր գտնել: Նոր հովանավորող խումբ չգտնելու պարագայում.

- SAH-ի (կամ CG-ի, կամ SAH-ի համահովանավորի) հովանավորյալ նորեկները կարող են ֆինանսական օժանդակություն ստանալու նպատակով հղվել RAP-ի եկամտային աջակցության՝ մինչև ոտքի կանգնելը, կամ մինչև հովանավորման ժամկետի ավարտը:
- Group of Five-ի, կամ Community Sponsor-ի հովանավորյալ նորեկները կարող են ստանալ Declaration of Sponsorship Breakdown, և հղվել սոցիալական օժանդակության նահանգային մարմնի:

**Ի՞նչ հետևանքներ ունի հովանավորման breakdown-ը նորեկների համար**

Եթե IRCC-ն որոշի, որ breakdown-ը հովանավորյալ նորեկի պատճառով է տեղի ունեցել, ապա նորեկը կարող է զրկվել ինչպես Կանադայում հովանավոր խմբի, այնպես էլ IRCC-ի հետագա օժանդակությունից:

**Ի՞նչ հետևանքներ ունի հովանավորման breakdown-ը հովանավորների համար**

Եթե հովանավորող խումբը պատասխանատվություն չի կրում breakdown-ի համար, ապա Declaration of Sponsorship Breakdown-ում նշում կարվի, որ breakdown-ը «մեղավորության հիմքով չէ»: Հովանավոր խմբի համար հետևանքներ չեն լինի:

Հովանավոր խումբը պատասխանատու չի հայտարարվի breakdown-ի համար, եթե պարզվի, որ.

• այն շարունակում է կատարել հովանավորի՝ իր պարտականությունները;

• եղել են չնախատեսված հանգամանքներ, որոնք ազդել են սեփական պարտավորությունների կատարման՝ հովանավոր խմբի ունակության վրա, և հաջողությամբ փոխարինող խումբ է գտնվել, կամ հովանավոր խումբը ողջամիտ ջանքեր է գործադրել նոր հովանավոր գտնելու ուղղությամբ;

• հովանավորման պարտականությունները չեն կատարվում հովանավորի վերահսկողությունից դուրս գտնվել պատճառներով (օրինակ՝ նորեկը կամավոր, ոչ վեճի պատճառով, հեռացել է վերաբնակեցման սկզբնական համայնքից), և հովանավոր խումբը ողջամիտ ջանքեր է գործադրել նոր հովանավոր գտնելու ուղղությամբ:

**Հովանավորման default կհայտարարվի, եթե հաստատվի, որ հովանավոր խումբը կրում է breakdown-ի պատասխանատվությունը և խնդիրը լուծել չի ցանկանում:**

Հովանավորման default-ի հետևանքները կարող են ներառել հետևյալը.

- հովանավոր խմբին այլևս չի թույլատրվի հովանավորման հայտ ներկայացնել, մինչև default-ը չլուծվի:
- SAH-երի դեպքում, նրանց հովանավորման համաձայնագիրը կարող է առկախվել կամ չեղարկվել:
- IRCC-ն կարող է եզրակացնել, որ հովանավոր խումբն անկարող է կատարել իր պարտականություններն այն գործերի կապակցությամբ, որոնց շահառուները դեռևս արտերկրում են, և կարող է առաջարկ ներկայացնել խմբի ընթացիկ գործերի հովանավորման թույլտվությունները չեղարկելու մասին: IRCC-ն կարող է իրականացնել հովանավոր խմբի՝ Կանադայում ներկայիս ունեցած այն հովանավորումների մոնիթորինգ, որոնք դեռևս հովանավորման մեկամյա ժամանակահատվածում են գտնվում՝ հավաստիանալու համար, որ տրամադրվում է համապատասխան ֆինանսական ու բնակեցման աջակցություն:

Default-ն ավարտվում է, երբ.

- Խումբը պետությանն է վերադարձնում նորեկի կողմից պետական ֆինանսավորումից օգտվելու հետևանքով առաջացած պարտքը, կամ
- IRCC-ի աշխատակիցը որոշում է, որ հովանավոր խումբը կատարել է իր պարտավորությունները:

Ֆինանսական default կարող է առաջանալ ինչպես ողջ խմբի, այնպես էլ մեկ անհատի մակարդակով:

**Ինչպե՞ս խուսափել հովանավորման dispute-ներից, breakdown-ներից ու default-ներից**

Լավագույն տարբերակն է՝ փորձել խուսափել հովանավորման dispute-ներից: Dispute-ների կանխարգելման ու կառավարման հարցում կարևոր նկատառումներից մի քանիսը հետևյալն են.

• **Պատրաստվածություն.** Հովանավորող խմբերը պետք է հովանավորման համար պատշաճ պատրաստվածություն և հագեցվածություն ունենան: SAH-երը պատասխանատու են իրենց CG-ների ուսումնավարժանքի համար: Group of 5-երը, Community Sponsor-ները, SAH-երը, CG-ներն ու համահովանավորները կարող են օգտվել բազմաթիվ ռեսուրսներից և ուսումնավարժանքային հնարավորություններից, որոնք ներկայացված են Փախստականների հովանավորման ուսումնավարժանքային ծրագրի (RSTP) կայքում (www.rstp.ca):

• **Հաղորդակցություն.** Հստակ, հետևողական և արդյունավետ հաղորդակցությունը կենսական նշանակություն ունի իրատեսական սպասելիքների սահմանման համար: Սա ներառում է նորեկներին ժամանումից ոչ շատ ժամանակ անց մանրակրկիտ կողմնորոշում տալն ու հովանավորման ողջ ընթացքում շարունակական հաղորդակցության պահպանումը: Երբ լեզվական պատնեշ կա, ապահովե՛ք, որ հաղորդակցությունը լինի նորեկի բարբառին տիրապետող թարգմանիչների միջոցով, և թարգմանիչներին խնդրե՛ք տեղեկատվությունը հաղորդել ճշտությամբ՝ առանց բովանդակության ավելացման կամ բացթողնման:

• **Սպասելիքների կառավարում.** Հովանավորի և հովանավոր խմբերի, ինչպես նաև հնարավոր նորեկների սպասելիքների վերաբերյալ նախաձեռնող կերպով արտահայտվելը շատ օգտակար է: Այն կարող է օգնել հասկանալ՝ արդյո՞ք այս սպասելիքներն «իրատեսական» են: Ընդհանրապես սպասելիք չունենալը, կամ միայն «իրատեսական» սպասելիք ունենալը կարող է նվազագույնի հասցնել միջանձնական բախումը, կամ անիրատեսական սպասելիքներից բխող վիրավորվածությունն ու հուսահատությունը: Սա նվազեցնում է հովանավորման breakdown-ի վտանգը: Սպասելիքների կառավարման մասին հավելյալ տեղեկատվության համար տե՛ս տեղեկատվական թերթիկը, հետևյալ հասցեով. http://www.rstp.ca/wpcontent/uploads/2016/07/Managing-Expectations.pdf

• **Ըմբռնում.** Հիշե՛ք, որ իրավիճակի մասին ամեն ինչից չէ, որ տեղյակ եք, ընդ որում, թե ինչու է մյուս կողմը կոնկրետ կերպ արձագանքում: Թերևս, կա թյուրիմացություն կամ հասարակ թյուրըմբռնում, որը դեռևս չի պարզվել: Հաճախ օգտակար է հիշել, որ միշտ չէ, որ ողջ ենթատեքստին ծանոթ եք: Հաղորդակցության բարելավման և ընդհանուր հայտարարի գալու համար անհրաժեշտ կլինի դրսևորել

համբերատարություն և հարցին ավելի մեծ ըմբռնումով մոտենալու կարողություն:

**Որտե՞ղ կարելի է հավելյալ տեղեկատվություն և աջակցություն ստանալ**

Հովանավորման breakdown-ների մասին ավելի մանրամասն տեղեկատվության համար տե՛ս In-Canada Processing of Convention Refugees Abroad and Members of the Humanitarian Protected Persons Abroad Classes – Part 3 (IP-3): http://www.cic.gc.ca/english/resources/manuals/ip/ip03-part3-eng.pdf:

Եթե բնակվում եք Թորոնթոյում և կցանկանայիք հովանավորման dispute-ի հարցով օգնություն ստանալ, կամ տեղեկատվություն ձեռքբերել Սպասելիքների կառավարման և հովանավորման էթիկայի վերաբերյալ սեմինարների մասին, ապա դիմե՛ք RSTP-ի Թորոնթոյի Փախստականների հովանավորման աջակցության նախաձեռնության (Toronto RSS)՝ torontorss@rstp.ca կամ 416-290-1700, հավելյալ համար 404:

Եթե Թորոնթոյում չեք բնակվում, ապա դիմե՛ք RSTP-ին, էլեկտրոնային փոստով՝ info@rstp.ca, կամ զանգահարելով 1-877-290-1701՝ հովանավորների և նորեկների իրավունքների ու պարտականությունների, հովանավորման dispute-ների, breakdown-ների և default-ների, առաջիկա սեմինարների և հավելյալ այլ խնդիրների մասին տեղեկատվության համար:

© 2016, Catholic Crosscultural Services and the Refugee Sponsorship Training Program. Այս փաստաթուղթը պաշտպանված է հեղինակային իրավունքով և նախատեսված է արտոնված օգտագործման համար: Եթե Դուք արտոնված չեք, սակայն ցանկանում եք օգտագործել այս նյութը ամբողջությամբ կամ մասամբ, ապա դիմե՛ք մեզ resources@rstp.ca հասցեով:

Catholic Crosscultural Services
Փախստականների հովանավորման ուսումնավարժանքի ծրագիր (RSTP)
Հեռ. 1-877-290-1701
Ֆաքս՝ 416.290.1710
Էլ. փոստ՝ info@rstp.ca, կայք՝ www.rstp.ca